ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

0010, ք.Երևան, Վ.Սարգսյան 5
Հեռ. (+37410) 511-703

ՎԴ-1-Ե-
6 մարտի 2023թ.

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **ԽԱՉԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Ղազարյան,

Սույն թվականի մարտի 1-ին ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է Ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի ավագ հետաքննիչ Է.Մովսիսյանի՝ 2022 թվականի ապրիլի 28-ի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին և Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ Ս.Խաչատրյանի՝ 2022 թվականի մայիսի 17-ի՝ բողոքը մերժելու մասին որոշումների դեմ դիմող Կարեն Խաչատրյանի բողոքի վերաբերյալ թիվ ՀԿԴ/0089/11/23 (ԵԴ/0481/11/22) դատական գործը, և ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին դիմելու մասին Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վահե Դոլմազյանի՝ 2023 թվականի փետրվարի 20-ի որոշումը:

Վերոնշյալ որոշմամբ արձանագրվել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ Կ.Խաչատրյանի բողոքն ըստ ընդդատության ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան, որի, ինչպես նաև դատական գործի ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ թիվ ՀԿԴ/0089/11/23 (ԵԴ/0481/11/22) դատական գործն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին, հետևաբար, սույն գործով առարկայական ընդդատությունը որոշելու համար այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին:

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարանների միջև ընդդատության մասին վեճերին վերաբերող կարգավորումները կիրառվում են Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահի նշանակման պահից:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ Նախագահի՝ 2023 թվականի մարտի 3-ի թիվ ՆՀ-85-Ա հրամանագրով՝ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավոր Արթուր Դավթյանը նշանակվել է Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ, ուստի՝ վերոգրյալ անցումային դրույթների ուժով, հիշյալ դատական գործի առարկայական ընդդատությունը ենթակա է որոշման ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննությունների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

2. Եթե հիմնական դատաքննությունների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:

(...)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած Հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, մինչև նախնական դատաքննություններ նշանակելը որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

6. (…) [Ս]ույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, որոշումը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի ընդդատության հարցը: Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը մինչև որոշում կայացնելը խորհրդակցում է Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահների հետ՝ վարույթի ընդդատության վերաբերյալ նրանց դիրքորոշումը պարզելու նպատակով»:

Դատական վարույթի՝ ըստ ընդդատության փոխանցման իրավահարաբերությունները կարգավորող՝ վկայակոչված քրեադատավարական նորմից հետևում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված է դատարանների միջև միայն այն գործերի ընդդատության վերաբերյալ վեճերի

լուծման իրավասությունը, որոնց դատական վարույթն առաջին ատյանի դատարանն իրականացնում է **նախնական և հիմնական դատալսումների կարգով**:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» գլխի նորմերի վերլուծությունից հետևում է, որ տվյալ փուլում դատական վարույթի՝ նախնական և հիմնական դատալսումների եղանակով կազմակերպելու ընթացակարգային պահանջ նախատեսված չէ:

Վերոհիշյալ իրավակարգավորումների համադրված ուսումնասիրությունից ուղղակիորեն բխում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության փուլում առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության վեճը լուծելու իրավասություն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ և նկատի ունենալով, որ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վահե Դոլմազյանի կողմից բարձրացված խնդրո առարկա հարցի քննարկումը դուրս է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված լիազորությունների շրջանակից, վերադարձվում է թիվ ՀԿԴ/0089/11/23 դատական գործը:

Առդիր՝ թիվ ՀԿԴ/0089/11/23 դատական գործը՝ բաղկացած 52 թերթից, նյութեր՝ 31 թերթից:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ